

ՍԱՂՄՈՍ 60

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Պատերազմում պարտվելու ողբ և օգնության աղոթք	Հրատապ աղոթք Աստծո բարեհաճության նորոգության համար	Ազգային թշնամիներից ազատվելու աղոթք	Փրկության աղոթք	Պարտությունից հետո ազգովի աղոթք
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Շուշան-Էդութի (Վկայության շուշաններ) եղանակով. Դավթի մտորումը, երբ Հովարն Ադի ձորում տասներկու հազար հոգու կոտորեց				
60:1-5	60:1-3	60:1-3	60:1-5	60:1-2 60:3-4
	60:4-5	60:4-5		60:5
60:6-8	60:6-8	60:6-8	60:6-8	60:6 60:7 60:8
60:9-12	60:9-12	60:9-12	60:9-12	60:9-10 60:11-12

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՅԻՎԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 60:1-5

- ¹Ո՛վ Աստված, Գու մեզ լքեցիր,
Գու մեզ կոտրեցիր, բարկացար մեզ վրա .
Օ՛, ետ դարձի՛ր դեպի մեզ:
²Դողացրիր երկիրը, կոտրեցիր այն .
Բուժի՛ր նրա ճեղքերը, քանի որ երերում է:
³Քո ժողովրդին ծանր բաներ ցույց տվեցիր .
Մեզ ապշության գինի խմեցրիր:
⁴Բայց Քեզանից վախեցողներին դրոշակ տվիր՝
Ճշմարտության համար պարզելու, Սելա .
⁵Որպեսզի քո սիրելիները փրկվեն,
Աջ ձեռքովդ փրկի՛ր . ու լսի՛ր ինձ:

60:1-3 Այս պարբերությունը նկարագրում է, թե ինչպես սաղմոսերգուն ընկալում իր/Իսրայելի փոխհարաբերությունը ՅԱՀՎԵԻ հետ:

1. Նա լքել է մեզ – BDB 276, KB 276, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 44:9, 23, 74:1, 77:7, 108:11
2. Նա կոտրել է մեզ – BDB 829, KB 971, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, հավանաբար կապված է պաշտպանական պարսպի վրա ճեղքի հետ
3. Նա բարկացել է – BDB 60, KB 72, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
4. Նա դողացրեց նրանց երկիրը – BDB 950, KB 1271, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ
5. Նա կոտրեց՝ բացեց երկիրը – BDB 822, KB 954, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, հազվադեպ բառ է, միայն այստեղ և կապակցված ձևը՝ Երեմ. 22:14-ում է, որտեղ թարգմանված է՝ «կտրեց»:
6. Նա Իր ժողովրդին ծանր բաներ տվեց – BDB 906, KB 1157, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ
7. Նա գինի խմեցրեց նրանց (այսինքն՝ հարբեցրեց և անսթափ դարձրեց) – BDB 1052, KB 1639, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ, գավաթը պետք է որ ազգերի համար լիներ (տես՝ Երեմ. 25:16-26), իսկ այժմ տրվել է ուխտի ժողովրդին՝ միևնույն արդյունքով (տես՝ Եսայի 51:17,22):

Նկատելք, որ բոլոր ԲԱՅԵՐԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ են, որը ցույց է տալիս կայացած իրավիճակ: Այս բաների լույսի ներքո սաղմոսերգուն աղոթում է, որ Աստված՝

1. վերականգնի մեզ – BDB 996, KB 1427, *Polel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 80:3,7, 19, 85:4, 126:1, Ողբ 5:21
2. բժշկի (այսինքն՝ «վերականգնի»), NIDOTTE, հատոր 3, էջ՝ 1163) երկիրը – BDB 950, KB 1272, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 2 Մնաց. 7:14. սա կարող է վերաբերել պարսպի վրա ճեղքին՝ Սաղմ. 60:1ա:

Պետք է ասել, որ Աստծո օգնության, պաշտպանության, փրկության համար բոլոր այս աղոթքները հիմնված են Իր ժողովրդի հավատքի և ապրելակերպի վրա (տես՝ 2 Մնաց. 6:37-39): Աստծո բոլոր խոստումները (բացի Մեսիայի և Նրա ծառայության վերաբերող խոստումներից) պայմանական են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՄԱՐ ՈՒԽՏԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

60:1 Աստծո կողմից Իր ժողովրդի լքված լինելը (տես՝ Սաղմ. 60:1,10, Սաղմ. 60:3,5) ցնցող է: Մենք պետք է հիշենք, որ Աստված Իսրայելի համար նպատակ ուներ: Նա պետք է լիներ Աստծո բնավորության և նպատակների հայտնության համար համաշխարհային մեխանիզմը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ, տես՝ Եզեկ. 36:22-38): Սա պահանջում էր ուխտի հավատարիմ հնազանդություն (տես՝ 1 Մնաց. 28:9): Ծննդոց

3-ի անկման պատճառով նրանք չէին կարող. դատաստանը միակ տարբերակն էր (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

«Նրա սրբությանը» արտահայտությունը Սաղմ. 60:6 հզոր հիշեցում է Աստծո բնավորության մասին, որ Նա ցանկանում է Իր ժողովուրդը օրինակ ծառայեն ազգերի համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ):

Նոր մոտեցում էր անհրաժեշտ: Այս նոր մոտեցումը կոչվեց «նոր ուխտ» (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-38), որը ՆԿ-ը հստակեցնում է որպես Հիսուս Քրիստոսի ավետարան:

60:4-5 Կարծում եմ, որ սա պետք է լիներ առանձին պարբերություն (տես՝ NKJV, NRSV): ԵՆԹԱԿԱՆ փոխվում է Սաղմ. 60:13-ից: Այս պարբերությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻ գործողությունները Իսրայելի համար:

1. Այն մարդիկ, ովքեր ակնաձուլ են Իրենից, Նա նրանց դրոշակ է տվել (BDB 651, այսինքն՝ հաղորդակցվելու տեսանելի նշան կամ կերպ, տես՝ Ելից 17:15, Ես. 5:26, 11:12, 13:2, Սաղմ. 20:5), սա կարող էր լինել բացասական (այսինքն՝ փախնելու) կամ դրական (այսինքն՝ համախմբվելու) արտահայտություն:
2. Նա ցանկանում է, որ դա ցույց տալով Իր հետ հաղորդակից դարձնի (այսինքն՝ ճշմարտությունը. Եբրայերեն բաղաձայնները *שׁוֹר* կարող են նշանակել «նիզակի» կամ «ճշմարտության», BDB 905. UBS Տեքստային Նախագիծը պաշտպանում է «նիզակի» խոսքը՝ գնահատելով «B» (որոշ չափով կասկածելի). NRSV, NJB, NET Աստվածաշունչը, REB պաշտպանում են այս տարբերակը, սակայն NKJV և JPSOA տալիս են «ճշմարտություն»: «Նիզակի» համար բառը միայն այստեղ ունի ավելացված ձայնավոր:

Կարծես թե իմաստն այն է, որ ՅԱՀՎԵՆ ապահովում է որոշ օգնություն Իսրայելի համար Իր ներկայությամբ՝ նրանց վարած պատերազմների ժամանակ:

60:4 «Սելա» Տես Սաղմ. 3:2 գրառումը և Սաղմոսների Ներածությունը, VII:

60:5-12 Սա կապված է Սաղմոս 108:6-13-ի հետ:

60:5 «Քո սիրելիները» Այս ԱԾԱԿԱՆԸ (BDB 391) կիրառվում է ՅԱՀՎԵԻ ուխտի ժողովրդին նկատի ունենալով (տես՝ Ես. 5:1, Երեմ. 11:15, 12:7): Սա հզոր, սիրառատ նկարագրություն է:

❖ Այս համարն ունի երկու աղոթքի խնդրանք՝ հիմնված Սաղմ. 60:4-ի վրա:

1. փրկիր մեզ (MT, *Qere* «ինձ») - BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. պատասխանիր մեզ (MT *Qere* «ինձ») – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 277) տալիս է MT-ի «մեզ» բառին «C» գնահատական (բավականին կասկածելի): ՀՈԳՆԱԿԻՆ Սաղմ. 60:10 և 11-ում է:

❖ «**Քո աջ ձեռքը**» Սա եբրայերեն դարձվածք է գործության և ազդեցիկ գործի համար (տես՝ Ելից 15:6, Սաղմ. 17:7, 44:3, 98:1, 108:6, 138:7, 139:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՌՔ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 60:6-8

⁶Աստված Իր սրբությամբ խոսեց. «Ես ցնձալու եմ, Բաժանելու եմ Սյուրեմը ու չափելու եմ Սոկրովտի հովիտը:

⁷Իմն է Գաղաադն ու Իմն է Մանասեն,

Եփրեմն Իմ գլխի գորությունն է, Հուդան Իմ օրենսդիրն է:

⁸Մովաբն իմ լվացվելու ամանն է.

Եդովմի վրա եմ գցելու մուճակս.

Ո՛վ Փղշտացիների երկիր, հաղթակա՛ն աղաղակի՛ր Իմ պատճառով»:

60:6-8 Այս պարբերությունը մեծարում է ՅԱՀՎԵԻ ինքնիշխանությունը (կամ «սրբությունը», BDB 871) ազգերի վրա (տես՝ 2 Օր.32:8): Այս համարները կրկնվում են Սաղմ.108:6-13-ում, որը նշանակում է, որ այն կարող է լինել պատարագի մի մաս: Հնարավոր է, որ սա կապ ունի Ելից 15:14-17-ի հետ: ՅԱՀՎԵՆ Ինքը խոսում է (այսինքն՝ «Աստված է խոսել» - BDB 180, KB 210, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ):

1. ես ցնծալու եմ – BDB 759, KB 831, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
2. բաժանելու եմ – BDB 323, KB 322, *Piel* ԸՂՁԱԿԱՆ
3. չափելու եմ – BDB 551, KB 547, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
4. «իմն է»
5. նույնը ինչ 4-րդ կետը
6. «Իմ գլխի զորությունն է»
7. «Իմ օրենսդիրն է»
8. «Իմ մուճակն եմ գցելու նրա վրա» (այսինքն՝ արհամարհանքի դարձվածք)
9. «հաղթական աղաղակի՛ր, Իմ պատճառով» (հավանաբար պետք է լիներ, «Փղշտացիների վրա Ես բարձրաձայն կաղաղակեմ», ինչպես Սաղմ. 108:9գ-ում):

Ուշադրություն դարձրեք անունները բոլորն էլ Հետու ցեղերի հերթականությամբ են՝

1. մի քաղաք – Սյուքեմ
2. մի դաշտավայր – Սոկքովտ
3. մի շրջան – Գաղասաղ
4. երեք ցեղ – Մանասե, Եփրեմ, Հուդա (Հուդայի համար, որպես գավազան՝ տես Ծննդ. 49:10)
5. երեք պարտված Բանանի ցեղեր – Մովաբ, Եդովմ, Փղշտացիների երկիր

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 60:9-12
⁹Ո՛վ է տանելու ինձ պարսպապատ քաղաք .
Ո՛վ է առաջնորդելու ինձ մինչև Եդովմ,
¹⁰Եթե ոչ Դու, ո՛վ Աստված, որ լքեցիր մեզ,
Ու չելար մեր գորքերի հետ, ո՛վ Աստված:
¹¹Նեղության մեջ օգնություն ցույց տուր մեզ .
Քանի որ ունայն է մարդու օգնությունը:
¹²Աստծով մենք քաջաբար ենք գործելու,
Քանի որ Նա է, որ ոտնակոխ է անում մեր թշնամիներին:

60:9-12 Այս պարբերությունը խոսում է առանց ՅԱՀՎԵԻ օգնության և ներկայության ռազմական հաղթանակների անհնարինության մասին (այսինքն՝ Սուրբ Պատերազմ):

1. Սաղմ. 60:9 հարցնում է ռազմական հարց
2. Սաղմ. 60:10 պնդում է, որ հոգևոր իրողությունը (այսինքն՝ Սուրբ Պատերազմը), որ մինչև որ ՅԱՀՎԵՆ Իսրայելի բանակի առջևից չգնա, ոչ մի հաղթանակ հնարավոր չէ, տես՝ Սաղմ. 44:9, 108:11
3. Սաղմ. 60:11 պնդում է ֆիզիկական իրողությունը, որ ռազմական հաղթանակը մարդկային կերպերով գուր է և անցողիկ
4. Սաղմ. 60:12 պնդում է, որ միայն ՅԱՀՎԵԻ հետ կարող է հաղթանակ գրացվել, տես՝ 2 Օրինաց 20:1, 1 Թագ. 17:45, 47, Սաղմ. 20:7, 22:16-17, 44:1-3,5-7, 146:3, Չաք. 4:6: Սա վերաբերում է Աստծո նպատակների հաղթանակին Իսրայելում, որպես ազգերի համար լույս և ոչ թե պարզապես հաղթանակող:

Այս պնդումների ամբողջ նպատակը Սաղմ. 60:10-ի հարցն է, «Դո՞ւ ես արդյոք մեզ լքել, ով Աստված»: Եթե նա օգնություն չցուցաբերի, հույս չկա (Սաղմ. 60:11բ): Եթե նա անի, ապա կլինի հաղթանակ (Սաղմ. 60:12), Աստծո նպատակի և Իսրայելի ապահովության և խաղաղության համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Կարդացե՛ք Սաղմոսը և փորձե՛ք բաժանել այն թեմաների: Ի՞նչ եք կարծում, Սաղմոս 60:1-3 և Սաղմոս 60:4-5 արդյոք առանձին թեմաներ են:
2. Ո՞րն է Սաղմ.60:6-8-ի աստվածաբանական նպատակը: Ինչո՞ւ է Սաղմոս 108-ում այն կրկնվում:
3. Սաղմոս 60:8 ունի մի քանի բացասական պատկերներ: Բացատրե՛ք դրանք:
4. Ո՞րն է Սաղմ.60:9-12-ի հիմնական աստվածաբանական ճշմարտությունը: